


Հաստատված է
«Տեխնիկական անվտանգության
ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի

տնօրեն Ա. Պետրոսյան
ստորագրություն



ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N° 992

20.04.2016թ.

ք. Երևան

Համաձայն «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի, «Գեոթիմ» ՓԲԸ տնօրենի և «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի միջև 05.04.2016թ.-ին կնքված N° 992 պայմանագրի՝ 11.04.2016թ.-ից մինչև 20.04.2016թ.-ը «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ-տեխնիկական անվտանգության փորձաքննության մարզային վարչության պետ Խ.Բաբայանի կողմից տեխնիկական անվտանգության փորձաքննության ենթարկվեց «Գեոթիմ» ՓԲԸ-ի կողմից շահագործման նախապատրաստվող ՀՀ Վայոց Ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի ոսկու կորզման գործարան արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերը:


Համաձայն նախագծային փաստաթղթերի նախատեսվում է Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի հանքաքարից ոսկու կորզումը կոյտային տարավացման մեթոդով: Բացահանքից հանքաքարը ավտոինքնաթափերով տեղափոխվում է ջարդիչ կայանք, որտեղ այն մանրեցվում է երկու փուլով: Աշխատանքների անընդհատությունն ապահովելու համար ջարդիչ կայանքը սարքավորված է 600տ տարողությամբ ընդունիչ բունկերով, ինչպես նաև նախատեսվում է 540.0 հազ. տ տարողության հանքաքարի պահեստով: Առաջնային մանրեցումը նախատեսվում է կատարել այտային ջարդիչով, իսկ երկրորդային մանրեցումը փակ համակարգով եռակի՝ բազմանկյուն քարմաղեր ունեցող կոնային ջարդիչով: Մանրեցված հանքաքարը 5.3 կմ երկարությամբ վերգետնյա ժապավենային փոխակրիչի միջոցով նախատեսվում է տեղափոխել 100տ ծավալով գրեյֆերային դարպասներով սարքավորված բեռնաթափման բունկեր, որը նախատեսված է երեք ավտոինքնաթափ բարձելու հաշվարկով: Բեռնաթափման բունկեր տեղափոխելու ընթացքում սնուցիչի միջոցով հանքաքարին նախատեսվում է ավելացնել կոշտ կիր: Բեռնաթափման բունկերից ավտոինքնաթափերի միջոցով հանքաքարը նախատեսվում է տեղափոխել կոյտային տարավացման հարթակ: Տարավացման հարթակը նախատեսվում է կառուցել չորս փուլով՝ 8.0մ հաստություն ունեցող հորիզոնական շերտերով, առավելագույնը 120մ բարձրությամբ: 1-ին փուլում նախատեսված է տեղադրել չորս շերտ, 2-րդ՝ վեց շերտ, 3-րդ՝ յոթ շերտ և 4-րդ՝ տասնմեկ շերտ: Կոյտային տարավացման գործընթացի

Ժամանակ յուրաքանչյուր շերտ նախատեսվում է կաթոցիչների կամ ցնցուղների միջոցով տարավվանալ ցիանիդի նատրիումի նոսրացված լուծույթով: Լուծույթը ներծծվելով հանքաքրի մեջ այնուհետև դրենաժային համակարգի միջոցով ինքնահոս եղանակով հավաքվում է հագեցած լուծույթի ավազանի մեջ, որտեղից էլ այն նախատեսվում է մղել մշակման գործարան՝ ոսկի և արծաթ կորզելու նպատակով: Հանքաքարի կույտի տարավացման ցիկլը ըստ նախագծի ընդունված է 60 օր: Մշակման գործարանը բաղկացած է աղսորբցման-դետորբցման-վերականգնման կայանից, զտման և ռեագենտների համալրման ու մատակարարման համակարգերից: Նախագծով տրված է նաև ոսկու կորզման գործընթացում ներգրավված հիմնական հանգույցների և սարքավորումների ցանկը որոնք են՝ ընդունիչ բունկեր, անվավոր թրթռասնուցիչ, այտավոր ջարդիչ, մանրեցված հանքաքարի բունկեր իր սնուցիչով, եռաշերտ վիբրացիոն քարմաղ, խոշոր թրթռամաղի փոխակրիչ, երկրորդային մանրեցման սնուցիչ բունկեր, երկրորդային կոնային ջարդիչներ, վերգետնյա փոխակրիչ, մանրեցված հանքաքարի լցակույտ, բեռնաթափման բունկեր իր սնուցիչներով, կույտային տարավացման հարթակ, մշակման ավազան, նոսր լուծույթի ավազան, հեղեղաջրերի կուտակման ավազաններ, ածխային աշտարակներ, էյուրատավորման աշտարակ, լուծույթի շերտավորման տարողություն, ռետորտ (սնդիկ որսալու համար), ինդուկցիոն վառարան, ծուլարան:

Նախագծում առանձին բաժնով նախատեսված են նաև աշխատանքի պաշտպանության և տեխնիկական անվտանգության միջոցառումներ:

Տեխնիկական անվտանգության փորձաքննության ենթարկված «Գեթիմ» ՓԲԸ-ի կողմից շահագործման նախապատրաստվող ՀՀ Վայոց Ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի ոսկու կորզման գործարան արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերը համապատասխանում են «Օգտակար հանածոների ջարդման, տեսակավորման և հարստացման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.10.2009թ N-1277-Ն որոշման պահանջներին և նախագծային փաստաթղթերին տրվում է տեխնիկական անվտանգության փորձաքննության դրական եզրակացություն:

Փորձագիտական եզրակացությանը կցվող նյութեր՝
- արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի պատճենը 65Պ էջ:

Վարչության պետ  Խ.Բարայան N 041
ստորագրություն, անուն, ազգանուն, վկայականի համարը